https://doi.org/10.46991/S&L/2020.87.102

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

Արտակ Հովհաննիսյան
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
քրեական դատավարության ամբիոնի պետ,
ոստիկանության փոխգնդապետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ-ում դատահիրավական բարեփոխումների ընթացքում մեծ նշանակություն է տրվում հանցավորության և հակահիրավական այլ երևույթների հակազդման ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ընդունմանը և գործող իրավական ակտերի կատարելագործմանը:

2007 թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ ԱԺ-ն ընդունեց նշված ոլորտին վերաբերող ևս մեկ օրենսդրական ակտ՝ Հայաստանի Հանրապետության օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին»[1] (այսուհետ՝ ՕՀԳ մասին օրենք, օրենք), որը կարգավորում է օպերատիվ-հետախուզական գործունեության (այսուհետ՝ նաև ՕՀԳ) ընթացքում ծավալվող հասարակական հարաբերությունները: Այդ օրենքը կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ-ում ՕՀԳ իրավական (օրենսդրական) կարգավորման հետագա կատարելագործման համար, քանի որ առաջին անգամ նշված օրենքի շրջանակներում կարգավորում ստացան ՕՀԳ իրականացման շատ հարցեր, որոնք նախկինում կարգավորված չէին ընդհանրապես կամ կարգավորվում էին ոչ պատշաճ կերպով: Սակայն, դրա հետ մեկտեղ, ՕՀԳ մասին ՀՀ օրենքը չլուծեց պետության իրավապահ գործունեության իրավական կարգավորման ոլորտում առկա հիմնախնդիրները, որոնք այսօր նկատելի են ՕՀԳ-ի իրավական կարգավորման և՛ օրենսդրական, և՛ գերատեսչական (ենթաօրենսդրական) մակարդակներում:

ՕՀԳ-ն, ինչպես և իրավապահ գործունեության ցանկացած այլ տեսակ, ունի իր նպատակը, որն ամրագրված է նույն օրենքի 3-րդ հոդվածում (մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, պետական ու հասարակական անվտանգության պաշտպանությունը հակահիրավական ոտնձգություններից), և խնդիրները, որոնք ամրագրված են ՕՀԳ մասին օրենքի 4-րդ հոդվածում[2]:

Օրենքի 3-րդ հոդվածում սահմանված նպատակին մենք հասնում են ՕՀԳ խնդիրների լուծման միջոցով, հետևաբար՝ այդ խնդիրները նրա նպատակի վերաբերությամբ ունեն «ենթակա» բնույթ, ինչը, սակայն, չի ենթադրում ՕՀԳ բոլոր խնդիրների պարտադիր լուծում. այդ նպատակին մենք կարող ենք հասնել մեկ կամ մի քանի խնդիրների լուծմամբ:

Մեր կողմից սույն հոդվածի շրջանակներում կքննարկվեն ՕՀԳ մասնավոր խնդիրներից մեկի՝ հանցագործությունների բացահայտման հիմնահարցերը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում հանցագործությունների բացահայտումը նախատեսված է որպես ՕՀԳ ինքնուրույն խնդիր, որում օրենսդիրը ամրագրել է նաև հանցագործությունը նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը:

---

[1] ՀՕ-223-Ն, ՀՀՊՏ 28.11.07./59 (583), հոդ.1197:

[2] Թեև ՕՀԳ մասին օրենքում տվյալ հոդվածը վերնագրված է «Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակները», սակայն դրա 3-րդ և 4-րդ հոդվածների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ խոսքը տվյալ գործունեության խնդիրների մասին է:

Մասնագետների կարծիքով՝ այս խնդիրն օպերատիվ-մարտավարական տեսանկյունից օժտված չէ ինքնուրույնությամբ և պետք է դիտարկվի որպես հանցագործությունների բացահայտման անբաժան մաս, քանի որ անհնար է հանցագործության բացահայտումն առանց այն կատարած անձի հայտնաբերման[1]:

Ե՛վ ՕՀԳ-ում, և՛ քրեական դատավարությունում «հանցագործության բացահայտում» նշանակում է հանցանքի կատարման հանգամանքների և այն կատարած անձի պարզում (հայտնաբերում): Քրեական դատավարության գիտությունում հանցագործության բացահայտման կապակցությամբ տարակարծություններ կան միայն այն բանի շուրջ, թե քրեական գործով վարույթի որ փուլում կարելի է տվյալ խնդիրը համարել լուծված[2]:

Հանցագործության (հատկապես՝ ծանր կամ առանձնապես ծանր կամ ոչ ակնհայտ պայմաններում կատարված) բացահայտումը օպերատիվ-հետախուզական և քննչական գործունեություն իրականացնող մարմինների ընդհանուր խնդիրն է[3], թեև գործունեության այս տեսակներից յուրաքանչյուրում հանցագործությունը բացահայտվում է տարբեր մեթոդներով և միջոցներով:

ՕՀԳ ոլորտի մասնագիտական գրականության մեջ հանցագործությունների բացահայտման հարցերը քննարկելիս շոշափվում է ևս մեկ եզրույթ՝ «ոչ ակնհայտ պայմաններում կատարված հանցագործություն», այն ասպեկտով, որ ՕՀԳ ընթացքում հանցագործության (որպես կանոն ծանր կամ առանձնապես ծանր) բացահայտման մասին կարելի է խոսել միայն, եթե այն կատարվել է ոչ ակնհայտ պայմաններում, երբ դեռ պետք է պարզել այն կատարած անձին:

Ոչ ակնհայտ պայմաններում կատարված հանցագործություն հասկացության ձևակերպման փորձ արվել է դեռ 1970 թ.-ին՝ «Հանցավորության իրավիճակի և ՆԳ մարմինների հսկողական-կանխարգելիչ, օպերատիվ-հետախուզական ու վարչական գործունեության արդյունքների վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունների կազմման կարգի մասին» ԽՍՀՄ ՆԳՆ հրահանգում[4], որտեղ նշված էր, որ ոչ ակնհայտ պայմաններում կատարված է համարվում այն հանցագործությունը, որի փաստով հարուցված քրեական գործում բացակայում է կասկածյալը: Այսինքն՝ երբ հանցանքի մասին ելակետային տեղեկատվությունը չի պարունակում տվյալներ մեղավոր անձի մասին:

«Ակնհայտ հանցագործություններ» և «ոչ ակնհայտ հանցագործություններ» հասկացությունները հանդիպում են նաև քրեադատավարական և կրիմինալիստիկական տեսական աղբյուրներում[5]: Ժամանակակից հեղինակներից Ա.Ռ. Բելկինը,

---

[1] Տե՛ս Теория оперативно-розыскной деятельности / Под ред. К.К. Горяинова, В.С. Овчинского, Г.К. Синилова. – М., 2006, էջ 39-40: **Вагин О.А., Гаврилов Г.Я., Горяинов К.К. и др.** Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности». – М., 2006, էջ 39: **Вагин О.А.**, **Исиченко А.П.** Постатейный комментарий к ФЗ «Об оперативно-розыскной деятельности». – М., 2006, էջ 39-40: **Шумилов А.Ю.** Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности». – М., 2007, էջ 23:

[2] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Белкин Р.С.** Криминалистика: проблемы, тенденции, перспективы: Общая и частная теории. – М., 1987, էջ 228-232:

[3] Այս հարցի շուրջ հայտնվել է նաև այլ կարծիք. հանցագործության բացահայտումը միայն օպերատիվ ստորաբաժանումների խնդիրն է (Տե՛ս **Карпец И.И.** Проблема преступности. – М., 1969, էջ 152: **Калинин Ю.В.** О понятии раскрытия преступлений // Вопросы криминалистической методологии, тактики и методики расследования. – М., 1973, էջ 35-36):

[4] Краткая инструкция о порядке составления анализа состояния преступности и результатов оперативно-розыскной, надзорно-профилактической и административной деятельности органов внутренних дел (форма ИЦ РО № 1) [Текст] / УВД Ростоблисполкома. Информ. центр. - Ростов н/Д : [б. и.], 1976. - 4 с.; 20 см.

[5] Տե՛ս, օր.՝ **Строгович М.С.** Курс советского уголовного процесса. В 2 т. Т. 1. – М., 1968, էջ 321: **Белкин Р.С.** Криминалистика: проблемы, тенденции, перспективы: Общая и частная теории. – М., 1987, էջ 230:

ելնելով ելակետային տեղեկատվության բովանդակության հանգամանքից, հանցագործությունները բաժանում է երկու խմբի: Առաջին խմբում նա հիշատակում է «ակնհայտ հանցագործությունները», այսինքն՝ նրանք, որոնք կատարվում են ակնհայտ պայմաններում, երբ ելակետային տեղեկությունները պարունակում են տվյալներ մեղավոր անձի մասին: Ինչ վերաբերում է երկրորդ խմբին՝ «ոչ ակնհայտ հանցագործություններին», ապա դրանք ոչ միայն կատարվում են քողարկված, ոչ ակնհայտ պայմաններում, այլև դրանց մասին ելակետային տեղեկատվությունը չի պարունակում տվյալներ հանցանք կատարած անձի մասին[1]:

Ըստ էության այստեղ շեշտադրումը կատարվում է այն հանգամանքի վրա, որ ՕՀԳ-ն պետք է ուղղորդվի ոչ ակնհայտ պայմաններում կատարված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտմանը: Հարկ է նաև նշել, որ ՕՀԳ մասին ՀՀ օրենքում օգտագործված չեն «ակնհայտ (կամ ոչ ակնհայտ) պայմաններում կատարված հանցագործություն» եզրույթները, ինչպես նաև հանցագործության բացահայտման խնդրի լուծումը կախվածության մեջ չի դրվում հանցանքի բնույթից և ծանրության աստիճանից: Մեր կարծիքով՝ այդ եզրույթների հիշատակումն օրենքում և դրանց հիման վրա օպերատիվ աշխատանքի դիֆերենցացիան կնպաստի ՕՀԳ արդյունավետության բարձրացմանը:

Վերոգրյալի լույսի ներքո անվիճելի ենք համարում Վ.Պ. Խոմկոլովի այն միտքը, որ ՕՀԳ-ն հանցագործությունների դեմ պայքարի օբյեկտիվորեն անհրաժեշտ ձև է, հանցագործությունները, որոնց համար հատկանշական են մանրամասն նախապատրաստումը, կոնսպիրացիայի տարբեր միջոցների օգտագործումը և հանցանքի հետքերը թաքցնելը՝ դրա նախապատրաստման կամ կատարման փուլերում[2]:

Սակայն մենք չենք անտեսում նաև այն կարծիքը, որ ակնհայտության և ոչ ակնհայտության հատկանիշով հանցագործությունների բաժանումը կրում է պայմանական բնույթ, և այդ եզրույթներին պետք է վերաբերվել շատ զգուշորեն: Պրակտիկայում քիչ չեն դեպքերը, երբ հանցանքի կատարման վայրում հայտնաբերված անձը, որի վրա կամ ում մոտ հայտնաբերվում են հանցագործության հետքեր կամ հատկանիշներ, հետագա քննության արդյունքում ճանաչվում է անմեղ: Ինչպես նաև պրակտիկայում հանդիպում են իրադրություններ, երբ ակնհայտ պայմաններում կատարված հանցագործության շատ հանգամանքներ այն կատարող անձի կողմից մանրակրկիտ թաքցվում է քննությունից, որոնց պարզումը և (կամ) ամրագրումը օպերատիվ աշխատողի կողմից տվյալ պահին անհնար է, և բնականաբար դրանց պարզման համար անհրաժեշտ է լինում անցկացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ (օր.՝ հանցագործության շարժառիթը, նպատակը, իրական սուբյեկտը, պատվիրատուն և այլ հանցակիցները, սահմանազանցումը, գողոնը թաքցնելու վայրը և այլն):

Ինչ վերաբերվում է ոչ ակնհայտ պայմաններում կատարված հանցագործությունների բացահայտման ընթացքում ՕՀԳ մեթոդների և միջոցների կիրառման նպատակային նշանակությանը, ապա ընդհանուր առմամբ դրանք օգտագործվում են, եթե ապացուցողական նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզումը բացահայտ քրեադատավարական ճանապարհով անհնար է կամ խիստ դժվար, և այս դեպքում խոսք կարող է լինել ոչ միայն հանցագործություն կատարած անձի մասին:

Ասվածից կարելի է կատարել հետևություն այն մասին, որ օրենսդիրը, ՕՀԳ-ի մասին օրենքում ամրագրելով հանցագործությունների բացահայտումը որպես

---

[1] Տե՛ս **Белкин А.Р.** Теория доказывания в уголовном судопроизводстве. - М.: Норма, 2007, էջ 139-140:

[2] Տե՛ս **Хомколов В.П.** Организация управления оперативно-розыскной деятельностью: системный подход. – М., 1999, էջ 56:

տվյալ գործունեության խնդիր, վերջինիս լուծումը կապում է անհրաժեշտ և բավարար օպերատիվ-հետախուզական տվյալների հավաքման հետ, որոնց ամբողջությունը հնարավորություն է ընձեռում տալ հանցագործության այսպես կոչված օպերատիվ-հետախուզական երանգավորումը (որակումը), այսինքն՝ ՕՀԳ-ն իր վրա չի վերցնում հանցագործությունը վերջնականորեն բացահայտելու պարտականությունը՝ թողնելով դա քրեական դատավարությանը:

Այս տեսանկյունից հետաքրքիր է Ա.Յու. Շումիլովի կողմից հանցագործությունների բացահայտմանը տրվող բնորոշումը: Այսպես, նա հանցագործությունների բացահայտումը դիտարկում է հետևյալ ասպեկտներով՝ 1) որպես ՕՀԳ կոնկրետ խնդիր և 2) որպես միասնական գործընթաց, որը սկիզբ է առնում հանցանքը հայտնաբերելու պահից (դեռևս ՕՀԳ-ի ընթացքում), երբ պետք է պարզել այն կատարած անձին մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի կայացումը[1]:

Ելնելով այդ ասպեկտներից՝ հեղինակը տարբերում է հանցագործության օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական կամ «վերջնական» բացահայտում: Նման մոտեցումը նա հիմնավորում է այն հանգամանքով, որ ՕՀԳ-ն պետական գործունեության ինքնուրույն տեսակ է, որին բնորոշ են սեփական խնդիրները, և այդ իսկ պատճառով միևնույն խնդրի (այսինքն՝ հանցագործությունների բացահայտման) բովանդակությունը ՕՀԳ-ում և քրեական դատավարությունում ունի տարբերություններ:

Այս մոտեցումը կիսում են նաև այլ հեղինակներ[2]:

Այսպիսի մտահանգումն ըստ էության համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին, որոնք դատավարական ապացուցման ընթացքում ՕՀԳ արդյունքներին տալիս են միայն օժանդակ դեր:

Այս հարցի շուրջ բավական անզիջում կարծիք է հայտնում Բ.Յա. Նագիլենկոն, որն առաջարկում է հանցագործությունների բացահայտումը որպես ՕՀԳ խնդիր հանել օպերատիվ-հետախուզական օրենքից և ՕՀԳ սուբյեկտների պարտականությունները սահմանող օրենսդրական ակտերից: Այդ խնդրի վերացման անհրաժեշտությունը նա հիմնավորում է նրանով, որ թեև միայն դատարանն է իրավասու ճանաչել անձին մեղավոր, բայց այդ դրույթին հակառակ՝ պրակտիկայում մինչդատական վարույթի ընթացքում (այդ թվում ՕՀԳ իրականացման շնորհիվ) անձի մեղավորության մասին արված նախնական ենթադրությունը դիտարկվում է որպես հիմք՝ նախնական քննության արդյունքները բացահայտված հանցագործության թվին դասելու համար: Եվ դա չնայած այն բանին, որ գործով վարույթը և հանցագործության փաստի առկայության ու անձի մեղավորության պարզման գործընթացը դեռ շարունակվում են: Դրանից հետևում է, որ չկան որևէ օրինական հիմքեր՝ նախնական քննության ավարտման փուլում հանցագործությունը բացահայտված համարելու համար, առավել ևս, որ համաձայն քրեական դատավարության օրենսգրքի դրույթների՝ ավարտվում է նախնական քննության, այլ ոչ թե հանցագործության բացահայտման գործընթացը[3]:

---

[1] Տե՛ս **Шумилов А.Ю.** Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности». – М., 2007, էջ 22:

[2] Տե՛ս Теория оперативно-розыскной деятельности / Под ред. К.К. Горяинова, В.С. Овчинского, Г.К. Синилова. – М., 2006, էջ 22: **Вагин О.А., Гаврилов Г.Я., Горяинов К.К.** и др. Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности». – М., 2006, էջ 37: **Вагин О.А., Исиченко А.П.** Постатейный комментарий к ФЗ «Об оперативно-розыскной деятельности». – М., 2006, էջ 37:

[3] Տե՛ս **Нагиленко Б.Я.** О понятии задач оперативно-розыскной деятельности милиции // О совершенствовании правового регулирования оперативно-розыскной деятельности правоохранительных органов и специальных служб Российской Федерации: материалы семинара (Москва, 24 марта 2005 г.). – М., 2005, էջ 152-153:

Հաշվի առնելով ՕՀԳ այս խնդրի բովանդակության պարզման ու ձևակերպման շուրջ առկա տարաձայնությունները՝ Վ.Ի. Զաժիցկին առաջարկում է այն ձևակերպել հետևյալ կերպ՝ «քրեական դատավարության միջոցներով հանցագործությունների արագ և լրիվ բացահայտման համար օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում անհրաժեշտ պայմանների և նախադրյալների ստեղծում»[1], իսկ Վ.Պ. Խոմկոլովը, ելնելով այն նկատառումից, որ օպերատիվ-հետախուզական օրենքը չի արտացոլում հանցավորության դեմ պայքարին ներգրավված իրավապահ գործունեության տեսակների շարքում ՕՀԳ դերը և նշանակությունը, որպես հարցի լուծում առաջարկում է նշված խնդրի հետևյալ ձևակերպումը՝ «հանցագործությունների բացահայտման և քննության ապահովում»[2]:

Ի տարբերություն վերը հիշատակված հեղինակների՝ Վ.Ի. Բասկովն առաջարկում է ՕՀԳ խնդիրների ցանկը լրացնել նոր խնդրով, այլ ոչ թե խմբագրել գործող դրույթները: Մասնավորապես, նա առաջարկում է որպես ՕՀԳ ինքնուրույն խնդիր դիտել *հանցագործությունների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության ապահովումը*՝ հիմնավորելով դա այն հանգամանքով, որ օպերատիվ մարմինների առջև դրված խնդիրները հիմնականում կրում են քրեադատավարական բնույթ, և ՕՀԳ իրականացման հիմքերը բխում են այն խնդիրներից, որոնք կանգնած են իրավապահ մարմինների առջև քրեական դատավարությունում[3]:

Անկասկած հեղինակն արդարացի է, երբ պնդում է, որ ՕՀԳ և քրեական դատավարության խնդիրներում շատ ընդհանուր բաներ կան: Սակայն, միաժամանակ, նա անտեսում է այն ճշմարտությունը, որ ՕՀԳ խնդիրներն իրենց էությամբ ավելի «համեստ» են, քանի որ ՕՀԳ-ն հանցագործությունների քննության և բացահայտման ընթացքում քրեական դատավարության նկատմամբ ունի օժանդակ բնույթ, և կատարված հանցագործության հանգամանքների հետազոտության լրիվության, օբյեկտիվության և բազմակողմանիության պահանջները աղերսներ չունեն օպերատիվ-հետախուզական օրենքի այն դրույթների հետ, որոնք պայմանավորում են ՕՀԳ գաղտնի իրականացման ասպեկտները: Ցանկացած գործունեության խնդիր պետք է համարժեք և համեմատական լինի դրա իրավական գործիքակազմին, իսկ ՕՀԳ միջոցները և մեթոդները մեր կարծիքով չեն կարող ապահովել կատարված հանցագործության հանգամանքների հետազոտության լրիվությունը, օբյեկտիվությունը և բազմակողմանիությունը (քրեադատավարական իմաստով):

Ինչպես արդարացիորեն նկատում է Մ.Ն. Մարշունովը, օպերատիվ-հետախուզական մարմնի առջև չպետք է խնդիր դնել պարզելու հանցակազմի բոլոր տարրերի առկայությունը. դա քննիչի, իսկ վերջին հաշվով՝ դատարանի խնդիրն է[4]:

Հանցագործությունների բացահայտման խնդրի էության կապակցությամբ, մեր կարծիքով, առավել հիմնավոր են այն գիտնականների արտահայտած տեսակետները, որոնք այդ գործում ՕՀԳ դիտում են որպես բաղադրատարր, քանի որ ՕՀԳ ընթացքում հանցագործության հանգամանքների ու սուբյեկտի հայտնաբերումը և մերկացումը չի կարելի դիտել որպես հանցանքի լրիվ բացահայտում: Այլ կերպ ասած՝ ՕՀԳ տվյալ դեպքում կրում է օժանդակ բնույթ, ինչն իհարկե որևէ կերպ չի նսեմացնում իրավապահ այդ գործունեության դերը հանցավորության դեմ պայքարի ոլորտում:

---

[1] Տե՛ս **Зажицкий В.И.** Результаты оперативно-розыскной деятельности в уголовном судопроизводстве: теория и практика. – СПб., 2006, էջ 57-59:

[2] Տե՛ս **Хомколов В.П.** Организация управления оперативно-розыскной деятельностью: системный подход. – М., 1999, էջ 47-48:

[3] Տե՛ս **Басков В.И.** Оперативно-розыскная деятельность. – М., 1997, էջ 51-52:

[4] Տե՛ս **Маршунов М.Н.** Федеральный закон об оперативно-розыскной деятельности в схемах и таблицах: Постатейный комментарий. – М.; СПб., 1998, էջ 94:

Ամփոփելով կատարված հետազոտությունը՝ կարելի է հիմնավոր եզրահանգում անել այն մասին, որ հանցագործության բացահայտման խնդրի օրենսդրական ձևակերպումը ենթակա է խմբագրման, ինչի կապակցությամբ առաջարկում ենք ՕՀԳ-ի մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում այդ խնդիրը ձևակերպել որպես «հանցագործությունների բացահայտմանն օժանդակելը» կամ որպես տարբերակ՝ «հանցագործությունների բացահայտման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելը»:

РАСКРЫТИЕ ПРЕСТУПЛЕНИЙ КАК ЗАДАЧА ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Артак Оганесян
Начальник кафедры уголовного процесса
Академии образовательного комплекса полиции РА,
подполковник полиции,
кандидат юридических наук, доцент

Статья посвящена исследованию юридической природы одной из задач оперативно-розыскной деятельности – раскрытию преступлений. На основе изучения позиций ученых по данному вопросу предпринята попытка разграничения уголовно-процессуальной и оперативно-розыскной аспектов раскрытия преступлений, предложена новая формулировка данной задачи в законе РА "Об оперативно-розыскной деятельности".

SOLVING CRIMES AS A TASK OPERATIONAL-INVESTIGATIVE ACTIVITIES

Artak Hovhannisyan
Head of the Department of criminal procedure
Academy of the RA police educational complex,
police Lieutenant Colonel,
Candidate of Legal Sciences, associate Professor

The article is devoted to the study of the legal nature of one of the tasks of operational search activity-detection of crimes. It is based on the study of the positions of scientists on this issue, an attempt is made to distinguish the criminal procedure and operational-search aspects of crime detection, and a new formulation of this task is suggested in the RA operational-search law.

Բանալի բառեր՝ հանցագործությունների բացահայտում, օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրներ, հանցագործություն կատարած անձի հայտնաբերում:
Ключевые слова: раскрытие преступлений, задачи оперативно-розыскной деятельности, обнаружение лица, совершившего преступление.
Key words: detection of crimes, tasks of operational-investigative activity, detection of the person who committed the crime.